

Ընդհանուր առմամբ, բարոյագիտության հիմնաւորման ծրագրի առաւելութիւնները կը նկատուին.-

- Բարոյական կողմնորոշման համար՝ բարոյական ասոյթներու վաւերական ու ապահով հիմքը:
- Այլ հիմնաւորումներու հանդէպ՝ հիմնաւորման կարելիութիւնն ու տոկոսութիւնը:
- Կասկածապաշտութեան (սկեպտիկութեան) եւ յարաբերապաշտութեան հանդէպ՝ մերժման կարելիութիւնը:
- Բարոյական համոզումներու եւ սկզբունքներու հանդէպ՝ քննադատութեան կարելիութիւնը:

Բարոյագիտութեան հիմնաւորման ծրագիրը սակայն, իր գործընթացի ատեն, կը հանդիպի որոշ հարցերու, որոնք դժուարութիւններ կը յարուցանեն, ինչպէս օրինակ՝ *կասկածապաշտութիւնը* (սկեպտիկութիւն, Scepticism), *յարաբերապաշտութիւնը* (Relativism), *ոչնչապաշտութիւնը* (Nihilism) եւ *սխալականութիւնը* (Fallibilism), զորս պէտք է առանձնապէս քննարկել ու մանրամասնել:

Թէ՛ կասկածապաշտութիւնը (սկեպտիկութիւն) եւ թէ՛ յարաբերապաշտութիւնը, որպէս փիլիսոփայական ուղղութիւններ, սկիզբ առած են՝ Հնադարեան ժամանակներէն, անցած՝ Միջին Դարէն եւ հասած՝ Նոր Դար ու ժամանակակից շրջաններ:

Ա.- Կասկածապաշտութիւն (Սկեպտիկութիւն)

Բարոյագիտական հիմնաւորում մը, քննարկումի եւ քննադատութեան ատեն մեծ հաւանականութեամբ կրնայ հանդիպիլ *կասկածապաշտութեան* (սկեպտիկութեան), որ յոյժ կասկածելի ու տարակուսելի կը գտնէ որեւէ տրամաբանական հիմնաւորում եւ նոյնիսկ իմացութեան որեւէ կարելիութիւն: Կասկածապաշտութեան համաձայն, իրականութեան եւ ճշմարտութեան ճանաչողութիւնը՝ հարցական է, յարաբերական է կամ ընդհանրապէս՝ անկարելի է:

Կասկածապաշտութեան (սկեպտիկութեան) համաձայն, ենթադրութիւն մը կամ բարոյագիտութեան հիմնաւորում մը փաստելու համար հարկաւոր են *նախադրութիւններ*, որոնք իրենց կարգին պէտք է փաստուին՝ այլ նախադրութիւններու հիման վրայ ... եւ այսպէս շարունակաբար: Ասոր կողքին կասկածապաշտութիւնը կը փորձէ որեւէ ենթադրութեան (կամ հիմնաւորման) դիմաց, համազօր ու համոզիչ հակաենթադրութիւն մը (կամ հակահիմնաւորում մը) յառաջացնել: Այս իմաստով կասկածապաշտութիւնը մեծ վտանգ կը սպառնայ բարոյագիտութեան հիմնաւորման որեւէ ծրագրի: Այսուհանդերձ կարելի չէ հրաժարիլ բարոյագիտութեան հիմնաւորման ծրագիրներէն եւ հարկ է նաեւ պահել՝ անոնց հանդէպ քննադատութեան կարելիութիւնը, որ ողջունելի է: